

ՍՈՒՐԵՆ ԶՐՄՈՅԱՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ,
իրավաբանական գիտությունների թեկնածու

ԺԵՆՅԱ ՄԱՐՈՒՏՅԱՆ

«Իրավախախտում կատարած անձանց
վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ, իրավաբան

ՓՈԽՆԱԿ ՄԱՅՐՈՒԹՅՈՒՆ

Հոդվածը վերաբերում է վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների, մասնավորապես փոխնակ մայրության կիրառման առանձնահատկություններին, օրենքով սահմանված կարգավորումներին, առկա բացթողումներին, ինչպես նաև փոխնակ մայրության սուբյեկտ հանդիսացող անձանց և վերջինիս դեպքում կնքվող պայմանագրային դրույթներին, միջազգային պրակտիկային և փոխնակ մայրության օրինականացման հիմքերին:

Հիմնարանը- վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներ, փոխնակ մայրություն, սուբյեկտներ, քանակական սահմանափակումներ, փոխնակ մայրության թույլատրելիություն, պայմանագիր, ֆինանսական փոխհատուցում, հսկողություն:

1. Փոխնակ մայրության ընդհանուր հասկացությունը.

Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառումն անփոխարինելի դեր է խաղում անպտղաբերության խնդրի լուծման հարցում: Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառումը և, մասնավորապես, փոխնակ մայրության ինստիտուտը պահանջում են մանրակրկիտ իրավական կարգավորում: Կանանց մայրանալ օգնում են փոխնակ մայրերը: Փոխնակ մայրն այն կինն է, որն իր արգանդի խոռոչում կրում է գեներտիկորեն իրեն չպատկանող պտուղ, որը ժառանգում է միայն կենսաբանական ծնողների գեները: Փոխնակ մայրը նախապես ենթարկվում է մանրակրկիտ բժշկական հետազոտության: Նա պետք է լինի լիովին առողջ առաջին հերթին այն պատճառով, որ հղիությունը ոչ մի վտանգ չներկայացնի իր իսկ առողջության համար և երկրորդ՝ որպեսզի փոխնակ մայրը ոչ մի վարակ չփոխանցի պտղին: Հղիության ընթացքում մոր և պտղի արյունները չեն խառնվում, իսկ նյութափոխանակությունը կատարվում է հյուսվածքային մակարդակով:

Փոխնակ մայրությունն աշխարհի տարբեր երկրներում յուրովի է ընկալվում, այդ հարցի շուրջ չկա միատեսակ մոտեցում: Շատ դեպքերում այն քննադատության է արժանանում՝ հաշվի առնելով այն բացասական հետևանքները (օրինակ՝ փոխնակ մոր և երեխայի միջև ստեղծված հոգեբանական կապը, փոխնակ մոր մարմնի անձեռնմխելիության իրավունքը), որոնք կարող են ի հայտ գալ երեխայի աշխարհի գալուց հետո, ինչպես նաև քիչ

չեն վերջինիս ջատագովները, որոնց պնդմամբ փոխնակ մայրությունը օգնում է անպտուղ գույգերին ունենալ լիարժեք ընտանիք և ծառայում է ի բարօրություն մարդկության:

Հայաստանի Հանրապետությունում փոխնակ մայրության հետ կապված բոլոր իրավահարաբերությունների կարգավորումն իրականացվում է օրենսդրական հարթության վրա:

Կնքվում է պայմանագիր փոխնակ մոր և կենսաբանական ծնողների միջև՝ նոտարական հաստատմամբ: Փոխնակ մայրը կարող է լինել կամ կենսաբանական ծնողների հարազատը, օրինակ՝ կնոջ կամ ամուսնու քույրը, կամ որևէ օտար կին: Վերջինս հիմնականում փոխհատուցվում է: Փոխհատուցման չափը նշվում է պայմանագրում, հաստատվում նոտարի կողմից: Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներն օգնում են այն ընտանիքներին, որոնք բնական ճանապարհով չեն կարող ունենալ իրենց սեփական երեխան, դառնալ ծնող և շարունակել սերունդը:

ՀՀ օրենքը «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» կարգավորում է սուրոգատ (փոխնակ) մայրության հետ կապված իրավահարաբերությունները: Օրենքում սահմանվում է փոխնակ (սուրոգատ) մայր հասկացությունը: Այս օրենքի համաձայն՝ սուրոգատ մայրը դոնորական սաղմը իր արգանդում կրող կինն է, որից ծնված երեխան չի կրում նրա գենոտիպը:

Որպես փոխնակ մայր հանդես գալու ցանկություն ունեցող անձինք կարող են անձամբ դիմել

www.journal.lawinstitute.am

համապատասխան առողջապահական հաստատություններ, կամ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեցող անձինք կարող են առողջապահական հաստատություն ներկայացնել փոխնակ մոր թեկնածուներ:

Դոնորի և փոխնակ մոր մասին տեղեկությունները հաշվառվում են համապատասխան առողջապահական հաստատություններում՝ առողջապահության ոլորտի հանրապետական գործադիր մարմնի սահմանած կարգով: Հարկ է նշել, որ փոխնակ մայրության կիրառման հետ կապված տեղեկությունները համարվում են բժշկական գաղտնիք և հրապարակման ենթակա չեն: Փոխնակ մայրության հետ կապված ցանկացած տեղեկություն տրամադրվում է միայն դատարանի (դատավորի), դատախազության, նախաքննության, հետաքննության մարմինների հարուցած քրեական կամ քաղաքացիական գործերի կապակցությամբ, ինչպես նաև այլ իրավասու մարմինների պահանջով՝ միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

Միաժամանակ անհրաժեշտ է հավելել, որ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման հետ կապված ծառայությունները մատուցում են առողջապահական միայն այն հաստատությունները, որոնք օրենքով սահմանված կարգով ունեն բժշկական օգնության և սպասարկման տվյալ տեսակով զբաղվելու լիցենզիա, ինչպես նաև պահպանում են վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման համար օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված պայմանները:

Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաները կիրառվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի հաստատած բժշկատեխնոլոգիական ցուցումների հիման վրա: Եվ հարկավոր է նշել, որ, օրենքի համաձայն, ապագա երեխայի սեռը պլանավորել չի թույլատրվում վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է սեռի հետ կապված հիվանդության ժառանգման հավանականություն:

Հայաստանի Հանրապետությունում տարբերակվում են փոխնակ մայրության մի քանի տարատեսակներ².

1) ամուսնական գույզի սպերմատոզոիդի և ձվաբջջի կորիզանյութերի միավորման արդյունքում առաջացած սաղմի (դոնորական սաղմի) փորձանոթային զարգացում ու ներպատվաստում փոխնակ մոր արգանդի խոռոչ:

2) ամուսնական գույզի կնոջ ձվաբջջի և դոնոր

տղամարդու սպերմատոզոիդի կորիզանյութերի միավորմամբ ստացված սաղմի փորձանոթային զարգացում ու ներպատվաստում փոխնակ մոր արգանդի խոռոչ:

3) ամուսնական գույզի տղամարդու սպերմատոզոիդի և դոնոր կնոջ ձվաբջջի կորիզանյութերի միավորմամբ ստացված սաղմի փորձանոթային զարգացում ու ներպատվաստում փոխնակ մոր արգանդի խոռոչ:

2. Փոխնակ մայրության սուրյեկտները:

2.1 Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեցող անձանց շրջանակը:

Հայաստանի Հանրապետությունում վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեն.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ գտնվող ամուսինը (կինը)՝ միայն կնոջ (ամուսնու) հետ փոխադարձ համաձայնության առկայության դեպքում:

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ չգտնվող տղամարդը կամ կինը՝ իր ցանկությամբ:

Սակայն այստեղ անհրաժեշտ է հավելել, որ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին»³ ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նոր նախագծում կատարվել է ավելացում առ այն, որ. «Մույն իրավունքը՝ փոխնակ մոր միջոցով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու մասով, չի տարածվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ չգտնվող Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ բնակվող օտարերկրացիների նկատմամբ»:

Ինչպես նաև օրենքով սահմանված է, որ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձինք իրավունք ունեն առողջապահության ոլորտի հանրապետական գործադիր մարմնի սահմանված կարգով նախապես իրագրելվել՝

1) վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման հետ կապված ժառանգաբանական, բժշկագիտական և իրավական հարցերի մասին:

2) վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման գործելակարգի մասին:

3) դոնորի կամ փոխնակ մոր արտաքին տվյալների, ազգային պատկանելության, ֆենոտիպի և բժշկագենետիկական հետազոտությունների արդյունքների մասին:

Միաժամանակ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձինք (ամուսինները) իրավունք ունեն ընտրել փոխնակ մորը: Հարկ է նշել, որ հաշվառվում են միայն այն փոխնակ մայրերի վերաբերյալ տեղեկությունները, ովքեր բժշկագենետիկական հետազոտության են ենթարկվել համապատասխան առողջապահական հաստատություններում և չունեն փոխնակ մայր լինելու հակացուցումներ:

2.2 Օտարերկրյա քաղաքացիները՝ որպես փոխնակ մայրության սուբյեկտ

Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիները կարող են հանդես գալ որպես փոխնակ մայրության սուբյեկտ, քանի որ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում սահմանված է, որ սույն օրենքը տարածվում է ՀՀ քաղաքացիների, Հայաստանում բնակվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վրա, ինչպես նաև այն իրավաբանական անձանց նկատմամբ, որոնց գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում կապված է մարդու վերարտադրողականության հետ: Այստեղ անհրաժեշտ է հավելել, որ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքում ավելացվել է մի դրույթ այն մասին, որ սույն օրենքը տարածվում է ոչ միայն ՀՀ տարածքում բնակվող, այլև այդ տարածքում գտնվող օտարերկրացի քաղաքացիների նկատմամբ:

2.3 Ովքեր կարող են լինել փոխնակ մայր:

Այժմ անդրադարձ կատարենք այն հարցին, թե ով կարող է հանդես գալ որպես փոխնակ մայր և ինչպիսի պարտավորություններ է ստանձնում պայմանագիր կնքելիս: Այս դրույթն իր սահմանումն է ստացել «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածում⁴:

• Այսպիսով, փոխնակ մայր լինելու իրավունք ունեն նախկինում առնվազն մեկ անգամ ծննդաբերած 20-35 տարեկան այն կանայք, ովքեր սահմանված կարգով ենթարկվել են բժշկագենետիկական հետազոտության, որի արդյունքում չեն հայտնաբերվել փոխնակ մայր լինելու հակացուցումներ:

• Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ գտնվող կինը կարող է փոխնակ մայր լի-

նել, սակայն ամուսնու համաձայնությամբ:

Ինչ վերաբերում է օրենքով նախատեսված տարիքային սահմանափակմանը՝ 20-ից մինչև 35 տարեկան, և առնվազն մեկ անգամ ծննդաբերած լինելու հանգամանքին, դա առավելապես նպատակ ունի կանխելու կամ կրճատելու փոխնակ մոր և ապագա երեխայի մոտ հնարավոր խնդիրների առաջացումը, քանի որ հենց այդ տարիքային ժամանակահատվածն է համարվում առավել նպատակահարմար հղիության և ծննդաբերության համար:

Միևնույն ժամանակ փոխնակ մայր չի կարող լինել այն կինը, որի փոխնակ մայր լինելը հակացուցված է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի հաստատած բժշկական ցուցումներով:

2013 թվականի N 214-ն «Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կարգը, մեթոդների տարատեսակներն ու բժշկական գործելակերպը սահմանելու մասին»⁵ ՀՀ կառավարության որոշմամբ մանրամասն ներկայացված են փոխնակ մայրության հակացուցումները և պարտադիր հետազոտությունների ծավալը:

Փոխնակ մայրության հակացուցումները հետևյալն են.

- 1) ֆիզիկական և հոգեկան հիվանդություններ, որոնց առկայության դեպքում հղիությունը և ծննդաբերությունը հակացուցված են.
- 2) արգանդի խոռոչի բնածին կամ ձեռքբերովի արատներ, որոնց դեպքում անհնար է սաղմերի պատվաստումը կամ հղիության կրումը.
- 3) ձվարանների ուռուցքներ.
- 4) արգանդի բարորակ ուռուցքներ, որոնք պահանջում են վիրահատական բուժում.
- 5) ցանկացած տեղայնացման սուր բորբոքային հիվանդություններ.
- 6) ցանկացած տեղակայման չարորակ ուռուցքներ:

Ինչպես նաև փոխնակ մայրը միաժամանակ չի կարող լինել ձվաբջջի դոնոր:

2.4. Որպես փոխնակ մայր հանդես գալու քանակական սահմանափակումը

ՀՀ օրենսդրությամբ դեռևս սահմանված չէ փոխնակ մայր հանդես գալու քանակական սահմանափակումը, սակայն այժմ քայլեր են ձեռնարկվում այդ օրենսդրական բացը լրացնելու ուղղությամբ: «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին»⁶ ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծում (նախագիծը Ազգային ժողովում է) առաջարկվել է ավել-

լացնել այն դրույթը, որ կինը չի կարող հանդես գալ որպես փոխնակ մայր, եթե նախկինում առնվազն երկու անգամ հանդես է եկել այդ կարգավիճակում: Այդ լրացումը նպատակ է հետապնդում փոխնակ մոր ինստիտուտի՝ առևտրային նպատակով կիրառելու հնարավորության բացառման:

Ինչպես նաև, այս դեպքում քանակական սահմանափակում չնախատեսելը ուղղակիորեն կարող է հանգեցնել մարդու անձեռնմխելիության իրավունքի կոպիտ խախտման: Մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ, որտեղ նշվում է, որ յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք և՛ բժշկության, և՛ կենսաբանության ոլորտներում. մասնավորապես արգելվում են եվգենիկական փորձերը, մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը, մարդու վերարտադրողական կլոնավորումը:

3. Փոխնակ մայրության թույլատրելիությունը բժշկական ցուցում, սոցիալական հանգամանքներ:

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին»⁸ ՀՀ օրենքի հոդված 11-ում սահմանված է վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման հիմքերը, համաձայն որի՝ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաները կիրառվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի հաստատած բժշկասոցիալական ցուցումների հիման վրա: Այստեղից կարելի է հետևություն անել առ այն, որ բացի բժշկական ցուցումներից (օրինակ՝ անպտղության դեպքում), փոխնակ մոր ծառայությունից կարող են օգտվել որոշակի սոցիալական ցուցումների առկայության դեպքում. դրանք կարող են լինել կնոջ մեծ տարիքը, չափազանց ծանրաբեռվածությունը և մասնագիտական գործունեության հետ հղիության համատեղելիության անհնարինությունը: Սակայն այստեղ պետք է հավելել, որ բժշկասոցիալական ցուցումները պետք է իրական լինեն, և փոխնակ մոր ինստիտուտի կիրառումը պետք է լինի խիստ անհրաժեշտությունից ելնելով և ծառայի իր բուն նպատակի իրագործմանը:

4. Փոխնակ մայրության դեպքում կնքվող պայմանագիրը:

Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեցող անձանց և փոխնակ մոր կամ հայտնի դոնորի դեպքում փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքվող գրավոր պայմանագրերով,

որոնք ենթակա են նոտարական վավերացման:

Փոխնակ մայրության դեպքում կնքվող պայմանագիրը խառը պայմանագիր է, քանի որ այն օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված մի քանի պայմանագրերի տարրեր պարունակող պայմանագիր է: Խառը պայմանագրի կողմերի հարաբերությունների նկատմամբ համապատասխան մասերով կիրառվում են այն պայմանագրերի մասին կանոնները, որոնց տարրերը պարունակվում են խառը պայմանագրում, եթե այլ բան չի բխում կողմերի համաձայնությունից կամ խառը պայմանագրի էությունից:

Պայմանագրում ներառվում է դրույթ այն մասին, որ փոխնակ մայրն իրավունք չունի հրաժարվել իրենից ծնված երեխային հանձնել սույն օրենքով սահմանված կարգով պայմանագիր կնքած անձանց՝ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձին կամ ամուսիններին, ինչպես նաև փոխնակ մայրն իրենից ծնված երեխայի նկատմամբ չունի որևէ իրավունք և չի կրում որևէ պարտականություն երեխային սահմանված կարգով պայմանագիր կնքած անձին կամ ամուսիններին հանձնելու պահից:

5. Փոխնակ մայրության դեպքում ֆինանսական փոխհատուցման հետ կապված կարգավորումները:

Հայաստանի Հանրապետությունում փոխնակ մոր ծառայությունները կարող են լինել անվճար հիմունքներով. դա հիմնականում հանդիպում է հարազատների, ազգականների դեպքում, ինչպես նաև կարող է կրել վճարովի բնույթ:

Փոխնակ մայրը հղիություն կրելու և ծննդաբերելու համար կարող է ստանալ դրամական հատուցում՝ համապատասխան առողջապահական հաստատության կամ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձի կամ ամուսինների և փոխնակ մոր կողմից նախապես կնքված պայմանագրով սահմանված կարգով:

Միաժամանակ, փոխնակ մոր հետ պայմանագիր կնքած վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձը (ամուսինները) կրում է (են) բոլոր այն ծախսերը, որոնք կապված են հղիության ընթացքի, ծննդաբերության, ինչպես նաև բժշկական փաստաթղթերով հաստատված բարդությունների վերացման հետ:

6. Փոխնակ մոր նկատմամբ հսկողությունը բժիշկների և երեխայի կենսաբանական ծնողների կողմից:

Կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, որ ապագա երեխայի կենսաբանական ծնողները օրենքով սահմանված կարգով ունենան որոշա-

կի իրավունքներ՝ փոխնակ մոր նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով: Սակայն այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել նաև մյուս կողմի՝ սուրոգատ մոր, անձնական կյանքի և ազատության իրավունքը, որը պետք է պաշտպանվի, և կողմերի միջև կնքվող պայմանագրում սուրոգատ մոր և կենսաբանական ծնողների իրավունքները պետք է համաչափ լինեն:

Օրենքով սահմանված կարգով փոխնակ մայրը պարտավոր է բժշկական հաշվառման կանգնել հղիության վաղ ժամկետներում (մինչև հղիության 12 շաբաթը), մշտապես գտնվել բժշկի հսկողության տակ, խստորեն կատարել նրա խորհուրդները և հետևել իր առողջությանը: Միաժամանակ, փոխնակ մայրը վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձից կամ ամուսիններից առանձին ապրելու դեպքում պարտավոր է վերջիններիս տեղեկացնել հղիության ընթացքի մասին:

Այստեղ հարկ է նշել, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նոր նախագծում ավելացվել է հոդված, որը սանկցիաներ է սահմանում Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պահանջները խախտելու համար: Մասնավորապես, վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կարգը, մեթոդների տարատեսակներն ու բժշկական գործելակերպը խախտելը առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամի չափով: Իսկ այդ արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սահմանված տուգանքի առավելագույն չափի կրկնապատիկի չափով:

7. Փոխնակ մայրության դեպքում գրանցման առանձնահատկությունները:

Փոխնակ մայրության դեպքում գրանցման առանձնահատկությունները կարգավորվում են «Զաղաքացիական կացության ակտերի մասին»¹⁰ ՀՀ օրենքով: Վերոնշյալ օրենքում սահմանված է փոխնակ մայրության միջոցով ծնված երեխաների ծննդյան պետական գրանցման կարգը, որի համաձայն, եթե երեխայի ծննդի պետական գրանցումը կատարվում է ամուսնության մեջ գտնվող անձանց, ամուսնության մեջ չգտնվող տղամարդու կամ կնոջ հայտարարությամբ, որոնք օգտվել են օրենքով նախատեսված վերարտադրողականության օժան-

դակ տեխնոլոգիաներից, ապա ծննդյան մասին սահմանված ձևի փաստաթղթի հետ ներկայացվում է նաև փոխնակ մոր հետ օրենքով սահմանված կարգով կնքված պայմանագրի մեկ օրինակը:

Ինչպես նաև ամուսնության մեջ գտնվող անձինք, ամուսնության մեջ չգտնվող տղամարդը կամ կինը, որոնք օգտվել են օրենքով նախատեսված վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից, ծննդի պետական գրանցման գրքում գրանցվում են որպես ծնողներ (ծնող)՝ մոր հետ կնքած պայմանագրի հիման վրա:

8. Միջազգային փորձ՝ ըստ երկրների, սուրոգատ մայրության թույլատրելիությունն ու սահմանափակման պատճառները:

Ընդհանուր առմամբ ամբողջ աշխարհում ընդունված է տարբերակել փոխնակ մայրության երկու տեսակ՝ առևտրային և ոչ առևտրային: Առևտրային տիպի փոխնակ մայրության դեպքում որպես փոխնակ մայր հանդես եկող անձը ենթակա է վարձատրման: Իսկ ոչ առևտրայինի դեպքում փոխնակ մայրությունը իրականացվում է անշահախնդիր կերպով. վերջինս հիմնականում հանդիպում է հարազատների շրջանում:

ԱՄՆ-ի մի շարք նահանգներում, օրինակ՝ Արկանզասում, Կալիֆոռնիայում, Մասաչուսեթսում, Իլլինոուսում, Տեխասում, Նեվադայում թույլատրված է առևտրային տիպի սուրոգատությունը, սակայն դա հնարավոր է միայն ամուսնացած գույգերի դեպքում: Հնդկաստանում ևս թույլատրված է սուրոգատության առևտրային տեսակի իրագործումը: Ռուսաստանի Դաշնությունում, Ուկրաինայում նույնպես այն թույլատրված է, սակայն պարտադիր հանգամանք է ամուսնացած լինելու փաստը: Այս երկրներում համասեռամուլները սուրոգատ մայրության ինստիտուտից չեն կարող օգտվել: Թայլանդում նույնպես միայն ամուսնացած գույգերը կարող են ունենալ երեխա սուրոգատ մոր օգնությամբ, սակայն պարտադիր պայման է, որ վերջիններս ամուսնացած լինեն ոչ պակաս, քան 3 տարի:

Այժմ անցում կատարենք դեպի ոչ առևտրային սուրոգատությունը. այս դեպքում փոխնակ մայրը չի ստանում փոխհատուցում, միայն կարող են փոխհատուցվել այն ծախսերը, որոնք ուղղակիորեն կապված են հղիության ընթացքի, ծննդաբերության և երեխայի հետ:

ԱՄՆ-ի մի շարք նահանգներում, որտեղ անօրինական է առևտրային սուրոգատությունը, օրենքով սահմանված կարգով թույլատրվում է ոչ առևտրային սուրոգատության իրականացումը: Օրինակ՝ Կենտուկի, Նեբրասկա, Միչիգան, Ֆլորիդա, Վիրջինիա և այլն: Կանադայում, Բելգիայում,

www.journal.lawinstitute.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Գանհայում, Մեծ Բրիտանիայում, Հունաստանում, Իսրայելում, Ավստրալիայի մի շարք նահանգներում թույլատրված է ոչ առևտրային սուրոգատությունը: Իսկ ինչ վերաբերում է համասեռամուկների կողմից սուրոգատ մոր միջոցով երեխա ունենալուն, ապա այն թույլատրվում է Ավստրալիայի մի շարք նահանգներում և Իսրայելում:

Մեծ Բրիտանիայում, չնայած այն հանգամանքին, որ սուրոգատ մայրությունն արգելված չէ, սուրոգատ մայրը ստանում է ծնողի կարգավիճակ՝ անկախ երեխայի հետ կենսաբանորեն կապված չլինելուց: Եվ միայն դատական կարգով որդեգրելուց հետո կենսաբանական ծնողները կարող են ստանալ ծնողի իրավունքներ:

Սուրոգատ մայրությունն արգելված է Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում, Իսպանիայում, Պորտուգալիայում, Բուլղարիայում, ԱՄՆ-ի մի շարք նահանգներում: Հիմնականում արգելքը հիմնավորվում է երեխաներին անպտուղ գույգերի և սուրոգատ մոր միջև առևտրային հարաբերությունների սուբյեկտ դարձնելը կանխելու համար, սուրոգատ մայրությունից ծնված երեխաներին հոգեբանորեն պաշտպանելու, փոխնակ մայրերի և երեխաների իրավունքների ոտնահարումը կանխելու համար:

Մի շարք երկրներում, որտեղ սուրոգատ մայրությունը օրենքով սահմանված կարգով արգելված է, կարող է թույլատրվել օտարերկրյա փոխնակ մայրության ճանաչումը:

Չնայած այն հանգամանքին, որ Ֆրանսիայի Հանրապետությունում սուրոգատությունն արգելված է, 2014 թվականին Ֆրանսիայի բարձրագույն դատարանի վճռով օրինական են համարվում օտար երկրներում սուրոգատ մոր միջոցով ծնված երեխաների կարգավիճակը, այսինքն՝ Ֆրանսիայի քաղաքացի հանդիսացող անձանց երեխան, ով ծնվել է այլ երկրում փոխնակ մոր միջոցով, ստանում է Ֆրանսիայի քաղաքացիություն:

Գերմանիայում նույնպես 2014 թվականից ի վեր, Գերմանիայի գերագույն դատարանի վճռի հիման վրա, օրինական կարգավիճակ են ստանում Գերմանիայի քաղաքացի հանդիսացող ծնողների երեխաները, ովքեր ծնվել են օտար երկրում սուրոգատ մոր օգնությամբ: Իսպանիայում օրինական կարգավիճակ են ստանում այն երեխաները, որոնք ծնվել են այնպիսի երկրում, որտեղ սուրոգատ մայրությունը թույլատրված է:

Օտարերկրյա սուրոգատությունը չի ճանաչվում մի շարք երկրներում՝ Պորտուգալիայում, Նիդեռլանդներում, Իտալիայում: Այս երկրները դրսևորել են սուրոգատ մայրության նկատմամբ խստագույնս մերժողական քաղաքականություն,

հետևաբար նման երկրների քաղաքացիների երեխան, ով ծնվել է արտասահմանում սուրոգատ մոր միջոցով, չի ստանում տվյալ երկրի քաղաքացիություն: Ինչ վերաբերում է Ֆրանսիայի Հանրապետությանը, ապա այստեղ սուրոգատ մայրությունն արգելվել է սկսած 1991 թվականից, Վճռաբեկ դատարանի վճռի հիման վրա (Cass. Ass. plén., 31/05/1991): Այս արգելքն ամրապնդվել է 1994 թվականի «Բիոէթիկայի մասին» օրենքի հիման վրա և Ֆրանսիայի Քաղաքացիական օրենսգրքի 16-7 հոդվածում:

Սուրոգատության վերաբերյալ պայմանագիրը իրավաբանական ուժ չունի և նման պայմանագրի կնքման դեպքում նախատեսված է քրեական և քաղաքացիական սանկցիաներ (քաղաքացիական սանկցիաները նախատեսված են Քաղաքացիական օրենսգրքի 311-25, 325 և 332-1 հոդվածներում, իսկ քրեական պատասխանատվությունը սահմանված է Քրեական օրենսգրքի 227-12 §3 և 227-13 հոդվածներում):

Ֆրանսիայում սուրոգատ մայրության արգելքը հիմնավորվում է տարբեր բարոյական և էթիկական նորմերով, մասնավորապես, երեխաներին անպտուղ գույգերի և սուրոգատ մոր միջև առևտրային հարաբերությունների սուբյեկտ դարձնելը կանխելու համար, սուրոգատ մայրությունից ծնված երեխաներին հոգեբանորեն պաշտպանելու, փոխնակ մայրերի իրավունքների ոտնահարումը կանխելու համար, որոնք ծննդաբերել են երեխային, սակայն որևէ իրավունք չունեն նրա նկատմամբ: Սուրոգատ մայրերը հիմնականում հանդիսանում են անապահով ընտանիքների անդամներ և հեշտությամբ կարող են այդ ոլորտում ենթարկվել շահագործման:

Անհրաժեշտ է նշել, որ նման ժխտողական դիրքորոշումը կարող է առաջացնել նաև բարոյացումներ այն առումով, որ աշխարհի տարբեր երկրներում, որտեղ սուրոգատ մայրությունը թույլատրված է օրենքով սահմանված կարգով, և Ֆրանսիայի քաղաքացի հանդիսացող բազմաթիվ անպտուղ ծնողներ կարող են փոխնակ մայրերին փնտրել հենց այդպիսի երկրներում:

9. Փոխնակ մայրության օրինականացման հիմքերը¹¹

Մարդու վերարտադրողական իրավունքը մարդկային ցեղի շարունակականությունն ապահովելու և սերունդ թողնելու հնարավորությունն է:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածում ամրագրված է ընտանիքի պաշտպանության վերաբերյալ դրույթը, որի համաձայն ընտանիքը, որպես հասարակության բնական և հիմնական բջիջ,

բնակչության պահպանման և վերարտադրման հիմք, ինչպես նաև մայրությունը և մանկությունը պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են: Այսինքն, ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածում ամրագրված է ընտանիքի վերարտադրման իրավունքը: Իսկ վերարտադրման իրավունքի մեջ ներառված է նաև մարդու վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքը:

Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաները բժշկական օգնության և սպասարկման տեսակ են, որը, որպես մարդու վերարտադրողական իրավունք, սահմանված է նաև «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին»¹² ՀՀ օրենքում: «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում ամրագրված է մարդու՝ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը, որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, տարիքից, առողջական վիճակից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, Հայաստանի Հանրապետությունում ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք: Այսպիսով, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաները, մասնավորապես փոխնակ մայրությունը, հանդիսանում են բժշկական օգնության տեսակ, և ցանկացած ձևով այդ իրավունքի սահմանափակումը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, խախտում է մարդու՝ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու հիմնարար իրավունքը:

Միաժամանակ, փոխնակ մայրության ինստիտուտից օգտվելու իրավունքը կարելի է դիտարկել որպես նորարարության իրավունք, որն իր ամրագրումն է ստացել Պացիենտների իրավունքների եվրոպական խարտիայում¹³ (թիվ 10-րդ իրավունքն է), համաձայն որի՝ «Յուրաքանչյուր ոք, անկախ տնտեսական և ֆինանսական գործոններից, իրավունք ունի օգտվել միջազգային չափանիշներին համապատասխան նորագույն բուժական, այդ թվում՝ ախտորոշիչ միջամտություններից»:

Ի վերջո, անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ մարդու վերարտադրողական իրավունքը հանդիսանում է մարդու սոմատիկ իրավունք, քանի որ սոմատիկ են անձի հետ կապված այն իրավունքները, որոնք կապված են մարդու մարմնի՝ որպես ամբողջականության, ինչպես նաև ամբողջականության առանձին մասերի (օրգաններ, հյուսվածքներ, բջիջներ) նկատմամբ մարդու, ըստ իր հայեցողության, տիրապետման, օգտա-

գործման, տնօրինման հետ: Այսինքն, դա մարդուն տրված հնարավորությունն է՝ ազատորեն տնօրինելու իր մարմինը բացարձակ և անժամկետ եղանակով:

Իսկ ինչ վերաբերում է առևտրային նպատակով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու եղանակով երեխաներ ունենալու հանգամանքին, ապա հարկ է նշել, որ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»¹⁴ ՀՀ օրենքի նախագծում առևտրային նպատակով փոխնակ մոր ինստիտուտի կիրառումը լիովին կանխելու նպատակով ամրագրվել են երկու հիմնարար դրույթներ.

1. Երեխայի և ծնողի միջև պարտադիր կենսաբանական կապի առկայության վերաբերյալ դրույթը, ըստ որի՝ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու դեպքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ գտնվող ամուսինները կամ նրանցից առնվազն մեկը, իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ չգտնվող տղամարդը կամ կինը պետք է լինեն(ի) ապագա երեխայի կենսաբանական ծնողը, ինչը պետք է հաստատվի ԴՆԹ-ի միջոցով:

2. Ինչպես նաև փոխնակ մոր ինստիտուտի կիրառման սահմանափակման դրույթը, ըստ որի՝ կինը չի կարող երկու անգամից ավել հանդես գալ որպես փոխնակ մայր:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է փաստել, որ երեխային ծնունդ տալը, մարդկային ցեղը վերարտադրելու, հասարակությանը անհատ տրամադրելու իրավունքը հավասար է մարդու՝ երեխաներ ունենալու իրավունքին՝ անկախ այն հանգամանքից, թե այդ երեխան ինչ ճանապարհով է ծնվել: Վերարտադրողականությունը մարդու հիմնական քաղաքացիական իրավունքն է, և փոխնակ մայրության իրավունքը ամբողջովին պետք է լինի պետության հոգածության ներքո:

- ¹ <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1339&lang=arm>
- ² <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1339&lang=arm>, Հոդված 11
- ³ <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=40186>, Հոդված 2
- ⁴ <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1339&lang=arm>
- ⁵ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=82029> Կետեր 57, 58
- ⁶ <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=40186>, Հոդված 3
- ⁷ <http://www.arlis.am/documentview.aspx?docID=102510>, Հոդված 25
- ⁸ <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1339&lang=arm>, Հոդված 11
- ⁹ <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1339&lang=arm>, Հոդված 15
- ¹⁰ <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2212&lang=arm>, Հոդված 16
- ¹¹ <http://www.arlis.am/documentview.aspx?docID=102510>
- ¹² <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1688&lang=arm>
- ¹³ http://www.ars.champagne-ardenne.sante.fr/fileadmin/CHAMPAGNE-ARDENNE/ARS_Internet/concertation_regionale/usagers/fiches_ciss/Fiche_Pratique_42_charte_europeenne.pdf
- ¹⁴ <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=40186>, Հոդված 3

Սյրեն Կրմոյան

Заместитель министра юстиции Республики Армения,
кандидат юридических наук.

Ջենյա Մարուտյան

«Реабилитационный центр правонарушителей» ГНКО,
юрист

РЕЗЮМЕ

Սուրոգատնո մատերինստվո

Статья относится к вспомогательным репродуктивным технологиям, в том числе суррогатному материнству, особенностям применения, нормативным актам, существующим недостаткам, а также субъектам суррогатного материнства, договору, международной практике и основе легализации суррогатного материнства.

Ключевые слова: ВРТ, суррогатное материнство, субъекты, количественные ограничения, приемлемость суррогатного материнства, контракт, финансовая компенсация, контроль.

Suren Krmoyan

Deputy Minister of Justice of Republic of Armenia,
Candidate of legal sciences

Zhenya Marutyanyan

«Offenders' Rehabilitation Center» SNCO,
lawyer

SUMMARY

Surrogate maternity

The article refers to assisted reproductive technology, including surrogacy, the peculiarities of the application, statutory regulations, the existing gaps, as well as subjects of the Surrogacy, the provisions of the contract, international practice and legalization of the grounds of surrogate motherhood.

Keywords: assisted reproductive technologies, surrogate motherhood, subjects, quantitative restrictions, surrogate motherhood acceptability, contract, financial compensation, control.